Փունջը ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի : — Տարեկան բաժանորդագինն է երկու եւ կէս արծաթ Մէճիտ կանխիկ վճարելի, թէ՛ մայրաքաղաքիս եւ թէ՛ արտաքնոց եւ թէ՛ գաւառաց համար : — Վեց եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ կ'ընդունուի : — Հատը 40 փարայ է, եւ կը ծախուի մամլավաճառներու Պանչէ Պարուն ջրավաճառ եւ գրավաճառ Պօղոս եւ Յակոբ աղայից խանութներու : — Ծանուցման տողը 3 ղուրուշ է մէկ անգամի համար : Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար :

ՀԱՍՑԷ
Ան. Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալաճաճեան
Կ. ՊՈԼԻՍ
Պալըգ-բազար Նաֆիյէ խան վերի յարկ Թիւ 16

ՓՈՒՆՋ

درعليه‌ده بالق بازارنده نافعه خاننده اوست قاتده
۱۶ نومرولی اوطه‌ده پونچ غزته‌سی صاحب امتیازی
خچارسوم آلاجاجیان

ADRESSE
H. S. ALADJADJIAN
Directeur du journal Arménien
POUNTCH
16 Nafiè-Han, Balouk-Pazar 16
CONSTANTINOPLE

Թիւ 2442 — ՇԱԲԱԹ — 1895 ՓԵՏՐՈՒԱՐ 4

Տարեկան մեծ տօներէն մին, Օգոստափառ մեծ Սուլթան Համիտ Խան Բ. կայսեր բարեբաստիկ ծննդեան տարեդարձի հանդէսն հրաշալի շքով կատարեց աշխարհանաղ մայրաքաղաքն և համայն երկիրն Թուրքիոյ, երկուշաբթի, Յունուար 30։

Նոյն օրը, առաւօտուն, աղօթարանք զարդարեցան լուսավառեցան, բարեմաղթութեանց հանդէսք կատարուեցան վասն պատուական կենաց և փառապանծ գահու Նորին կայսերական Վեհափառութեան, և գրուատէօք յիշատակեցան աշխարհաշէն առքնութիւնք, անձնուիրութիւնք և մեծագործութիւնք Նորին կայսերական Վեհափառութեան։

Նոյն օրը, մեր Ամեն. Տ. Մատթէոս Իզմիրլեան Ս. Պատրիարք Հայրն ալ իջաւ Մայր եկեղեցի, զոր զարդարել ու լուսավառել տուած էր յատկապէս, և թափոր կազմելով Արքեպիսկոպոսներէ՝ Եպիսկոպոսներէ, վարդապետներէ, քահանաներէ, եկեղեցական երգովք և օրհնութեամբք բարեմաղթութեանց հանդէս կատարեց ի ներկայութեան պաշտօնաւոր ու անպաշտօն ազգայնոց և բազմախուռն ժողովրդեան։

Նոյն օրը, ինչպէս պետական աւագանին ու մեծամեծք, կրօնական հասարակութեանց պետք, դեսպանատանց թարգմանք, նոյնպէս և մեր Ամեն. Ս. Պատրիարք Հայրն, Պատրիարքարանի գործակատար Աբրահամ էֆէնտիի հետ Եըլտըզի կայսերական պալատն երթալով՝ ի դիմաց ամենայն Հայոց Թուրքիոյ, ուղերձ մատոյց յոտս կայսերական գահոյից, և արժանացաւ կայսերական մեծարանաց։

Նոյն օրը կայսերական պալատը լցաւ եւրոպական վեհապետաց, իշխանապետաց, իշխանաց, վարչական մեծամեծաց, Թուրքիոյ կուսակալաց, կառավարչաց, կրօնական երեւելեաց և այլոց շնորհաւորութեան ու բարեմաղթութեանց ուղերձներով ու հեռագրերով։

Մայրաքաղաքիս և գաւառաց մէջ պարտուց համար բանտարկեալք արձակեցան՝ նոցա պարտքերը վճարուելով կայսերական անձնական գանձէն։ Արձակեցան զանազան յանցանօք բանտարկեալք ալ՝ ներումն շնորհուելով Նորին կայսերական Վեհափառութեան կողմանէ։ Նաև առատ ողորմութիւն բաշխուեցաւ՝ աղքատաց և կարօտելոց։

Այսպէս, ամէն ուրեք, ուրախութիւն, խնդութիւն, մաղթանաց երգեր, նուագներ, գրուագներ ու աղաղակներ։

Այսպէս, ո՛չ միայն ցերեկն, այլ և բոլոր գիշերն հանդիսիւ ու շքով անցաւ։ Ցամաքին վրայ՝ կայսերական պալատներն, պաշտօնատունք, զօրանոցք, ամէն կարգի ու աստիճանի աւագանւոյն ապարանքներն, սեղանաւորական, վաճառականական և այլ հաստատութիւնք, հասարակաց շէնքերն. և ծովուն վրայ՝ մարտանաւք, շոգենաւք ու առագաստանաւք շքեղաշուք զարդարեալ ու հրաշարուեստ լուսավառեալ էին։ Արդէն գեղեցիկն Կ. Պոլիս՝ նոյն օրը գիշեր ու ցերեկ դրախտատեսարան հիանալի երեւոյթ մ'առած էր։

Մեր Պատրիարքարանն ալ, ինչպէս ամէն տարի, նոյնպէս և այս տարի, ըստ կարգադրութեան Ամեն. Տ. Մատթէոս Ս. Պատրիարք Հօր, գիշերը զարդարուած լուսավառուած, հանդէս կատարեց, ընդունելութիւն ըրաւ։ Երգեր, ուղերձներ, բարեմաղթութիւններ՝ Պատրիարքարանի մէջ։ Լուսավառեալ զարդարեալ էին նաև Մայր եկեղեցւոյ և այլ եկեղեցեաց, վարժարանաց դրանդիք, Երուսաղիմատունն, Հիւանդանոցն, Խասգիւղի որբանոցն, և այլ կրթական՝ կրօնական ու բարեպաշտական հաստատութիւնք, որոց ամենքն ալ Նորին կայսերական Վեհափառութեան շնորհներն ու հովանաւորութիւնը կը վայելեն։

Եւ արդարեւ, ի՞նչ պիտի ըլլար Պատրիարքարանի նիւթական վիճակն, երբ Նորին Վեհափառութիւնն Ծննդեան և Յաջորութեան տօնի օրերն մեծ մեծ գումարներ չնուիրէր։ Կը յիշեմք՝ անցեալ ժամանակաց մէջ այդ տօնի օրերը Պատրիարքարանի պաշտօնէից կրած տառապանքն ու տուայտանքն, և Պատրիարքարանի սնտուկին մանրիկ փոխառութիւններ ընելու մուրալու համար կրած տագնապն։

Եւ արդարեւ, արդ ի՞նչ պիտի ըլլար Հիւանդանոցի հազարաւոր թշուառաց վիճակն, եթէ Նորին կայսերական Վեհափառութիւնն՝ օրական հացն ու միսն կրկնապատկելու մեծ շնորհն չընէր գթասրտութեամբ։

Եւ արդարեւ, ի՞նչ պիտի ըլլար Խասգիւղի Գալֆայեան որբանոցն, առանց Նորին կայսերական Վեհափառութեան շնորհաց։

Եւ ո՞չ ապաքէն Նորին կայսերական Վեհափառութիւնն է, որ ամէն տարի Հայոց Միացեալ ընկերութեան կը նպաստէ և քաջալերական շնորհներ կընէ։

Աւասիկ այս և այլ զանազան շնորհներն կը վայելեմք մեք Հայքըս և այլ ամէն հպատակք։ Նորին Վեհափառութիւնն արթնութեամբ ու անձնուիրութեամբ կը հսկէ ընդարձակածաւալ երկրին վրայ։ Անքուն կը ջանայ երկրին ըստ ամենայնի զարգացման ու բարգաւաճման համար։ Նորին կայսերական Վեհափառութեան միակ իղձն ու բաղձանքն է համայն ժողովուրդն տեսնել յանդորրու ու յապահովի, և անպատիժ ու անպատուհաս չթողուլ որ է անկարգութիւն ու զեղծումն։ Նորին Վեհափառութիւնն գոհ չլինիր եթէ իւր պատուական կենաց մէկ վայրկեանն իսկ առանց բարեգործութեան մը, առանց հանրօգուտ տնօրինութեան մը անցնի։

Այսպիսի անզուգական Վեհապետի մը համար միշտ հանդէս ու տօն կատարել, միշտ աղօթել, միշտ բարեմաղթել պարտիմք, և խնդրել Նախախնամութենէն որ անվթար ու անվտանգ պահէ իւր հանրօգուտ կեանքն ու գահն։

Ինչպէս մեր բոլոր պաշտօնակիցք, նոյնպէս և մեք կը գոչեմք այս բարեպատեհ առթիւ «Կեցցէ, յաւերժ կեցցէ մեր ամենասիրելի Վեհապետն Գազի Մեծ Սուլթան Համիտ Խան Բ. մեծագոյն Ինքնակալն»։

Եթէ մեք լռեմք, մեք չգոչեմք, քարինք երկրին կը գոչեն։ Ամէն ուրեք առաջի աչաց կոթողեալ արձանացեալ կան Նորին Մեծութեան սքանչելի տքնութեանց արդիւնք ու արդասիք։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Հիւանդանոցի Նորընտիր Հոգաբարձութիւնն այս շաբթու ալ չկրցաւ նիստ ընել՝ անդամոց մեծագոյն մասին բացակայութեան պատճառաւ։

— Երկրորդ աստիճանի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ՝ Իզմիրնէի Հայոց Առաջնորդ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոսի, առ ի փոխարինութիւն հաւատարմութեանն։

— Էջմիածնի Արարատ ամսագրի Դեկտեմբերի թերթէն կիմացուի թէ՝ Մայր Աթոռն այս տարի 130400 րուպլի (իբր 14500 Օսմ. լիրա) մուտք, և 124421 րուպլի (իբր 13800 Օսմ. լիրա) ելք պիտի ունենայ։

— Կրօնական և Քաղաքական Ժողովք չորեքշաբթի խառն նիստ ըրին։

Դատաստանական խորհրդոյ անդամ ընտրեցան՝ Զիլմէճեան Տ. Արիստակէս, Խանճեան Տ. Գարեգին, Շահպազեան Տ Յովհաննէս, Գրիգորեան Տ. Վահան քահանայք, և Խնամիրեան Գրիգոր, Ալչըճեան Մկրտիչ, Պօշնաղեան Յակոբ և Պառուեան Յովհաննէս էֆէնտիք։

Կտակաց Հոգաբարձութեան անդամ ընտրեցան՝ Գեր. Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Յովհաննէսեան, Արժ. Տ. Գարեգին վարդապետ Թաթարեան, Տ. Խաչատուր Աւագքահանայ Տ. Գաբրիէլեան, և Այճեան Կարապետ, Հրանտ Ասատուր, Կիւմիւշեան Յովհաննէս և Բարաղամեան Տիգրան էֆէնտիք։

— Ամասիոյ Կրօնական ու Քաղաքական Ժողովոց ընտրութիւնք վաւերացնել և օրհնութեան կոնդակ ղրկել որոշուեցաւ։

— Ուսումնական Նորընտիր խորհուրդն երկրորդ նիստն ըրաւ չորեքշաբթի։ Ատենապետ ընտրեցաւ Պէրպէրեան Ռէթէոս էֆէնտի, և Ատենադպիր՝ Կիւրճեան Մելքոն էֆէնտի։

— Ամերիկայի Հայոց նախորդ Առաջնորդ Սարաճեան Տ. Յովսէփ վարդապետ՝ Ատրպատականի Հայոց քարոզիչ անուանուեր է։

— Ի բացակայութեան Ս. Կաթողիկոսին Էջմիածնի, տեղապահական պաշտօն կը վարէ Շամախի Նախորդ Առաջնորդ Գեր. Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս։

— Էջմիածնէ Արքեպիսկոպոս տիտղոս տրուեցաւ Ամեն. Տ. Մատթէոս Ս. Պատրիարք Հօր, յատուկ կոնդակաւ, որ չորեքշաբթի հասաւ ի Պատրիարքարան։

— Ամեն. Ս. Պատրիարք Հայրն՝ չորեքշաբթի փոխադարձաբար այցելեց առ սերպիական դեսպանն։

— Գաւառներէն և օտար երկիրներէ պաշտօնաւոր և անպաշտօն եկեղեցականաց ու աշխարհականաց կողմանէ տակաւին շնորհաւորական հեռագիրք և նամակք կուգան առ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն։

— Երկրորդ աստիճանի Օսմանիյէ պատուանշան շնորհեցաւ Մամիկոնեան Տ. Աբրահամ եպիսկոպոսի, որ այս օրերս կուղեւորի ի Սիս՝ ինչպէս արդէն գրած եմք, Պատրիարքարանի կողմանէ։

— Ի պաշտօնէ կը հրատարակուի թէ այն անձերէն, -զորս վիրաւորած էին Հայ մասնախմբի հինգ անձնուէրք, 150 ոսկի առնելու նպատակաւ նոցա տանց վերայ յարձակելով, -Թոգատէ հեռագրեալ է, Ստեփան մեռած է, և թէ՝ միւս վիրաւորեալն ալ վտանգաւոր վիճակի մէջ է, և ձերբակալեալք օրինական գործողութեանց ենթարկեալ են։

— Ի նպաստ Հիւանդանոցի՝ հրապարակ ելած սիկառի թղթոց Յունուար ամսոյ զուտ շահէն մասըն ունեցեր է Հիւանդանոցի սնտուկն՝ 3475 ղրշ., որ՝ նախորդ տարւոյ Յունուարի բաժնին հետ բաղդատմամբ՝ 1902 ղշ. աւելի է։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստ. Սուլթանին ծննդեան տարեդարձի աւուր գիշերը երեւոյթ մը տրուեցաւ ի Նշանթաշը Բարձր. Մեծ Եպարքոսին ապարանքին մէջ, և տիկնանցին մէջ մեծարեցան դեսպանաց և բնիկ ու օտարազգի երեւելեաց ամանց տիկնայք ու դստերք, յորս էին գերմանական, չուետական և սերպիական դեսպանաց տիկնայք ու դստերք, կայսերական անձնական գանձուն նախարար Միքայէլ փաշայի ամուսին տիկինն եւայլք։

— Անգլիական դեսպանն երեքշաբթի տեսակցեցաւ՝ արտաքին գործոց նախարարին և Նորա խորհրդականին հետ։

— Գարասի գաւառի Իվգաֆի համարակալ Խալիտ պէյ՝ պաշտօնազուրկ եղաւ և դատի ենթարկեցաւ։

— Առաջին աստիճանի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ՝ արտաքին գործոց պաշտօնատան Մէքթուպճը Միւնիր պէյի։

— Կայսերական հրամանաւ 1200 ղշ. ամսական թոշակ որոշուեցաւ տիկին Ճթուբէի համար, որոյ ամուսինն, որ ամերիկեան հպատակ և Գալաթիոյ Թինէլի արկղակալ էր, Բերա Բանկալթի սպանուեցաւ։

— Յունաց նորընտիր Պատրիարքն Գալիմնոս կղզիէն Կ. Պոլիս հրաւիրելու պաշտօն ունեցող անձինք ուղեւորեցան։

— Ոստիկանութեան պաշտօնատան մէջ յանձնաժողով մը կազմուած է նախագահութեամբ Վսեմ. Նախարարին, ոստիկանական հսկողութեան գործն առաւել եւս բարեկարգելու միջոցներու համար։ Կայսերական հրամանաւ՝ սոյն յանձնաժողովոյ անդամ կարգեալ են Ներքին լրագրութեան վերատեսուչ Վսեմ. Պէհճէթ և Բ. Դրան իրաւախորհրդական Վսեմ. Հագգը պէյերն ալ։

— Բերայի ոստիկանութիւնն ստուարացաւ՝ 100 ոստիկանաց յաւելմամբ. պահակախումբք գիշերներն ամէն կողմ կը շրջին ի Բերա և ի Բանկալթի, և գլխաւոր փողոցներուն գլուխը կը հսկեն մէկմէկ ոստիկան և ժանտարմա։

Պատճէն Ամեն. Տ. Մատթէոս Ս. Պատրիարք Հօր անդրանիկ կոնդակին, որ անցեալ կիւրակէ մայրաքաղաքիս եկեղեցեաց մէջ կարդացուեցաւ, և գաւառներն ալ ղրկուեցաւ։

ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՅ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Եւ շնորհիւ Աստուծոյ եւ կամօքն
Ազգին Արհեպիսկոպոս Կոստանդնուպոլսոյ եւ Պատրիարք
Հայոց Թուրքիոյ.

Առաքելաշնորհ Սրբազան Արքեպիսկոպոսաց եւ Եպիսկոպոսաց եղբարց մերոց ի Քրիստոս, Գերապատիւ Թեմակալ Առաջնորդաց եւ Վանահարց, Արժանապատիւ Պատրիարքական եւ Առաջնորդական Փոխանորդաց, բարեխօս քարոզիչ Վարդապետաց, Հոգեւորդն Աւագերիցանց, կարգապաշտ Քահանայից, բարեջնորհ Սարկաւագաց, Հոգենուագ Դպրաց, բարեխնամ Դաստիարակաց եւ Ուսուցչաց, Պատուարժան անդամոց գաւառական Ընդհանուր, Կրօնական եւ Քաղաքական Ժողովոց, բարեջան Տեսուչ եւ Թաղական Խորհրդոց, ջանասէր Հոգաբարձութեանց, Կրթական եւ Բարեգործական Ընկերութեանց եւ ամենայն չափու հասակի հաւատացելոց ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որդոց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, երիտասարդաց եւ կուսանաց, Ողջոյն տիրանուէր եւ օրհնութիւն աստուածային։

Շնորհք, սէր, խաղաղութիւն եւ ողորմութիւն ամենասուրբ Երրորդութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ բազմասցի ի հոգիս եւ ի մարմինս հարազատ եւ լուսածնունդ որդւոցդ Առաքելական Ուղղափառ Սրբոյ Եկեղեցւոյս Հայոց։

Յայտ է Ձեզ, Եղբա՛րք իմ սիրելիք, թէ յորէ անտի յորում նուիրած էի զանձն ի սպասաւորութիւն Բանին կենաց, կը ծառայէի խմվանն Ս. Եկեղեցւոյս եւ Ազգիս, եւ ահա՛ ժողովն կոչեց զիս զտկարս եւ զկրտսերս յեղբարս իմ ի ծանրակիր պաշտօն Պատրիարքութեան, զոր յանձն առի՛ լինելով ապաստան յամենակարողն Աստուած, «Որոյ զօրութիւն ի տկարութեան կատարի» ըստ Առաքելոյն։ Կաղօթեմ առ Աստուած Հոգենուագ Սաղմոսերգուին հետ, «Ի Քեզ Տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան, յարդարութեան քում փրկեա եւ ապրեա զիս։» Միանգամայն եւ Ձեր ամենեցուն աղօթքը կը խնդրեմ, որպէս զի կարող լինիմ արժանապէս վարել սոյն Վերակացութեան պաշտօնն, յոր կոչուեցայ շնորհիւն Աստուծոյ եւ կամօք Ազգին եւ հաճութեամբ Ինքնակալ Կայսեր Թուրքիոյ։ Ակայքէն յայտնի է Ձեզ ամենեցուն, թէ իմ այս ստանձնած պաշտամանս անխուսափելի պարտաւորութիւնն է մեծ հոգ տանիլ բարեկարգութեան եկեղեցեաց, մեր Սուրբ Եկեղեցւոյ նախկին ծխից եւ կարգաւորեալ արարողութեանց միօրինակութեան, եկեղեցական պաշտօնէից իրենց նուիրական պարտուց անթերի կատարման, ազգային երկսեռ մանկտւոյն բարւոք կրթութեան, վանօրէից, հիւանդանոցաց, բարեգործական եւ ազգօգուտ հաստատութեանց յառաջեւ պայծառութեան եւ անվթար պահպանութեան։

Եւ որպէս զի այս ամէն պարտաւորութիւնները լիապէս կատարեմ, հարկ անհրաժեշտ է որ վայելեմ թէ՛ Եկեղեցական Ս. Հայոց եւ թէ՛ Հայ Ազգին աջակցութիւնը, որով միայն կարելի է պահպանել ի Յիսուսէ Քրիստոսէ, եւ մեր առաջին Լուսաւորիչ Թադէոս եւ Բարթուղիմէոս Սրբազան առաքեալներէն եւ մեր հօրւոյ լուսաւոր Ս. Գրիգոր Լուսաւորչէն մեզ աւանդուած Հայոց Ս. Եկեղեցւոյ ուղղափառ վարդապետութիւնն եւ զարգացնել ազգիս ընկերական, ընտանեկան եւ անհատական այն ուղիղ բարոյականութիւնն՝ որ հիմնուած է մեր երկնաւոր Վարդապետին քարոզած Ս. Աւետարանին եւ մեր երանաշնորհ Ս. Հարց քարոզութեանց վրայ, և մեր ազգին ուսանող մանկտւոյն միտքն ու սիրտը զարգացնել ճշմարիտ աստուածպաշտութեամբ, սրբացնել անոնց զգացումներն և ամենայն խնամով տալ նոցա Հայոց Ս. Եկեղեցւոյ ճշմարիտ զաւակն և Հայ Ազգին հարազատ մէկ անդամը լինելու նկարագիրը, և բարգաւաճել զմանկունս բարոյական գեղեցիկ յատկութեամբք, օգտակար ուսմամբք և պիտանի արուեստիւք, որով մեր ազգն թէ՛ ի կենցաղումն ունենայ իւր պատշաճ և նախանձելի դիրքը, և թէ՛ օր մը յերկինս փառաւորուի անպատում ուրախութեամբ իւր յաւիտենական յիշատակաց արժանի Հարց հետ։

Եւ արդ՝ Եղբա՛րք իմ Լծակիցք իմ և վաստակակիցք Սրբազան Արքեպիսկոպոսունք, Սրբազան Եպիսկոպոսունք, Պատրիարքական և Առաջնորդական Փոխանորդք, Դուք որ կարգեալ էք Տեսուչ և Հովիւ Ձեզ յանձնուած բանաւոր հօտին Քրիստոսի, և Ուխտիւ Սրբութեան պարտաւորութիւն յանձն առած էք առաջի ահաւորին Աստուծոյ և հաւատացեալ մարդկան, հսկեցէք որ Քրիստոնէական հաւատոյ աւանդն անարատ մնայ, հսկեցէք որ մեր Հայոց Ս. Եկեղեցւոյ Առաքելական կարգաց, կանոնաց, ծիսից և աւանդութեանց մէջ նորաձեւութիւնք չը սպրդին, հսկեցէք որ ամենայն եկեղեցական պաշտամունք, երգեցողութիւնք և Սրբազան Խորհրդոց մատակարարութիւնք կատարուին Քրիստոնէական հաւատով, յուսով և սիրով, կատարուին Հայոց Ս. Եկեղեցւոյ կարգաց և կանոնաց համաձայն, հսկեցէք որ Ձեզ ստորակարգեալ պաշտօնեայք՝ Վարդապետք, Քահանայք, Սարկաւագունք և Դպիրք սրբութեամբ և պարկեշտութեամբ քաղաքավարին և Քրիստոնէական հոգւով և զգացմամբ կատարեն իրենց պաշտօնը։ Ուշ դրէք ամենայն արթնութեամբ և մանրախոյզ քննութեամբ ընտրեցէք ձեռնադրութեան մատչողներն, որ եկեղեցասէր, անարատ, և որչափ հնար է, գիտուն անձինք լինին, որպէս զի Հայ եկեղեցականութիւնն որ սուրբ և ընտիր լինել պէտք է, չկազմուի անարժաններէ, և այս մասին տիրած դայթակղութիւնք հետզհետէ բարձուին։

Հսկեցէք, քարոզեցէք, յորդորեցէք, և խրատեցէք որ Հայոց Ս. Եկեղեցւոյ որդիք սիրայօժար փութան ի կատարումն իրենց Քրիստոնէական պարտուց, Ազգային պարտուց, և մարդասիրական պարտուց. մխիթարեցէք վշտացեալ և բեկեալ սրտերը։ Հոգ և խնամք տարէք աղքատաց, աղքատ հիւանդաց, որբոց և այրեաց վիճակին բարւոքման և անոնց պիտոյից յանձանձման։ Հսկեցէք Հայ մանկտւոյն կրօնական, բարոյական և մտաւորական կրթութեան վրայ, քաջալերեցէք կրթութեան գործին յառաջդիմութեան համար ամէն հաստատութիւններն և ձեռնարկները, և օգնեցէք անոնց այնու հաստատուն համոզմամբ թէ տգիտութիւնը աղբիւր է ամենայն չարեաց։

Ընտրելակից Եղբարք իմ ի Քրիստոս Յիսուս, կաղաչեմ զՁեզ, կատարենք զայս ամենայն՝ հոգւոյ ամենայն զօրութեամբ, մտաց բովանդակ կարողութեամբ և սրտի բոցավառ զգացմամբ. կատարենք մեր ամենայն պարտաւորութիւնները, զորս ունիմք առ Ս. Եկեղեցին Հայոց և առ Ազգն. պատկառ կենանք եկեղեցական օրինաց և կարգաց։ Եղբա՛րք իմ, հեռի ի մէնջ փառասիրութիւն, հեռի ի մէնջ արծաթսիրութիւն, որ՝ ըստ Առաքելոյն՝ է արմատ ամենայն չարեաց. հեռի ի մէնջ և անձնասիրութիւն։ Եղբա՛րք իմ, ապրինք Ս. Եկեղեցւոյ համար, զի մեր փառքն Եկեղեցւոյ շինութեան մէջ է. ապրինք Ազգին համար, զի մեր կեանքն ու հանգիստն Ազգին օգտին մէջ է. զայս կը պահանջէ և մեր ուխտը, զոր կատարած եմք առաջի Աստուծոյ և մարդկան, երբ աշխարհէ հրաժարելով նուիրեցինք մեր կեանքն ի ծառայութիւն Ս. Եկեղեցւոյ։ Յիշենք միշտ և գրենք մեր սրտի տախտակաց վրայ Սրբազան Առաքելոյն սա խրատն ու յորդորն, որ յաւիտենական ճշմարտութեան Ս. Հոգին քարոզել և գրել կուտար. «Զերիցունս այսուհետեւ աղաչեմ՝ իբրեւ երիցակից և վկայ չարչարանացն Քրիստոսի, որ և հանդերձեալ փառացն յայտնելոյ հաղորդ. Արածեցէք որ ի ձեզ հօտդ է Աստուծոյ, վերակացու լինել մի՛ իբրեւ ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ, մի՛ ղօշաքաղութեամբ այլ յօժարութեամբ, մի՛ իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին, զի յերեւել Հովուապետին, ընդունիջիք զանթառամ փառացն պսակ» (Կաթողիկեայց Պետրոս Ա. Գլ. Ե. 1-4)։

Վանօրայք և դպրեվանքներն մեր անմահանուն նախնեաց հիմնած նուիրական հաստատութիւններն են, և սահմանուած են ոչ միայն աղօթատեղիք, այլ և Կրթարանք և Ուսումնարանք լինելու, իրենց շուրջը բնակող բարեպաշտ ժողովրդոց Քրիստոնէական Ս. Կրօնի զգացումներն արծարծելու, անոնց զաւակունքն կրթելու, և ուսեալ ու պարկեշտ կրօնաւորներ ու Ս. Եկեղեցւոյ պաշտօնեաներ հասցնելու։ Ուստի յորդոր կը կարդամ Գեր. Վանահարց և Վերակացու Պաշտօնէից՝ քարոզելու հանապազ զԲանն կենաց Ս. Աւետարանն, ժողովրդեան կրօնական և բարեպաշտական զգացումները զարթուցանել ճշմարիտ հոգւով և կեանքով, օրինակ լինել աղօթասիրութեան, սրբակեցութեան, ընթերցասիրութեան և առաքինի կենաց, իմաստութեամբ տնտեսել վանուց ելքն ու մուտքը, հաւատարմութեամբ պահպանել Ս. Մենաստանին հողային և այլ ստացուածքներն ու գոյքերը, և զանոնք բարգաւաճ վիճակի մէջ պահել, շրջակայ գիւղօրէից մանկտւոյն տալ նախնական անհրաժեշտ կրթութիւն։ Եւ Ս. Եկեղեցւոյ արժանաւոր Վարդապետ ու Քահանայ պաշտօնեաներ հասցնելու վաստակիլ, քաղցրութեամբ վարուիլ կրօնաւորաց հետ. առատ և զուարթ սրտիւ մատակարարել կրօնաւոր եղբարց հարկաւոր պէտքերն և մխիթարել աղքատներն ու անկարները։ Իսկ սրբանուէր Կրօնաւորացդ կը պատուիրեմ որ հանապազորդէք յաղօթս, ի սաղմոսերգութիւնս, ի ժամերգութիւնս, ինչպէս որ իւրաքանչիւր ոք ի Ձէնջ ուխտած է առաջի յաւիտենականին Աստուծոյ, սիրով հնազանդիլ Վանահօր և անսալ նորա հրամանաց, և գործակցիլ նորա ջանից և վաստակոց, և Ս. Մենաստանին նիւթական և բարոյական բարգաւաճման համար աշխատիլ ամենայն անձնուիրութեամբ։

Ի Քրիստոս Յիսուս Եղբա՛րք իմ և որդեակք, որ կարգեալդ էք քարոզ Բանին կենաց յԵկեղեցիս Հայոց, կը յորդորեմ զՁեզ որ հանապազ քարոզէք հաւատացելոց Քրիստոնէական հաւատքը, յոյսն և սէրը. քարոզեցէք Ս. Աւետարանն և Առաքելոց թղթերը հետեւութեամբ և բացատրութեամբ մեր երանաշնորհ Ս. Հարց և Վարդապետաց. քարոզեցէք և ուսուցէք Ս. Աւետարանի եղբայրսիրական, աղքատասիրական և մարդասիրական առաքինութիւնները, կրեմ, ուսուցէք Քրիստոնէական գործնական կեանքը, ուսուցէք հեռի մնալ և փախչիլ ամէն տեսակ մոլութիւններէ և մոլորութիւններէ, շուայտութենէ և ցոփութենէ, հեշտասիրութենէ, հպարտութենէ, բարկութենէ, ծուլութենէ, նախանձէ, ատելութենէ, ագահութենէ, որկրամոլութենէ և բղջախոհութենէ. ուսուցէք մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյ կեանքը, մեր Ս. Հարց և Վարդապետաց կեանքն, առ հասարակ մեր տօնախմբեալ Սրբոց կեանքը և մեր Ս. Եկեղեցւոյ մէջ յիշատակեալ ամենայն սրբոց կեանքը. Քարոզեցէք և ուսուցէք աւետարանական սէր, աւետարանական միութիւն. յորդորեցէք, խրատեցէք որ մերձենան Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ Ս. Սեղանոյն, մանաւանդ Հաղորդութեան Ս. Խորհրդոյն, սիրոյ և միութեան աստուածային Սեղանոյն՝ ըսելով «Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է Տէր»։ Քարոզեցէք վերջապէս և ուսուցէք զոր ինչ պատուիրեց մեզ Տէր մեր Յիսուս Քրիստոս։

Եղբարք իմ և որդեակք ի Քրիստոս Յիսուս, աշխատեցէք ձեր սահմանին մէջ ձեր բովանդակ ուժով Հայ երկսեռ մանկտւոյն դաստիարակութեան և կրթութեան գործոյն. յորդորեցէք, խրատեցէք հայրերն ու մայրերը որ ճանաչեն իրենց պարտականութիւնն իրենց որդւոց կրթութեան և դաստիարակութեան մասին. հսկեցէք Հայ երկսեռ մանկտւոյն Քրիստոնէական բարւոք կրթութեան. զի ունին նորա մեծ պատասխանատուութիւն առաջի Աստուծոյ և մարդկան, երբ իրենց որդիք մնան թերուս և անկիրթ, և ունենան անօգուտ կեանք մը թէ՛ իրենց անձանց, թէ՛ իրենց ընտանեաց, թէ՛ Եկեղեցւոյ և Ազգին, և թէ՛ ընկերական կենաց համար։ Յորդորեցէք բոլոր Հայ Քրիստոնեայ հաւատացեալներն և կոչում ըրէք անոնց եկեղեցասիրական զգացմանց որ փութան սիրայօժար կատարելու իրենց առ Ս. Եկեղեցին և առ Ազգն ունեցած նիւթական և բարոյական պարտաւորութիւնները։ Քարոզեցէք և ուսուցէք ժողովրդեան ի գործ դնել այն ամէն միջոցներն, որք կը պահպանեն զիրենք ամենայն հոգեկան և մարմնական վնասներէ. ուսուցէք որ հետեւին ամենայն ողջապահիկ կանոնաց։

Եղբարք իմ և որդեակք ի Քրիստոս, իբրեւ պաշտօնեայ Ս. Եկեղեցւոյն Աստուծոյ և քարոզք Բանին կենաց՝ հարկ է որ մեր կոչման արժանի հանդիսանանք. ուսանելու պարապինք հանապազ Ս. Գիրքը, և ուսուցանենք հաւատացելոց Աստուծոյ հոգեշահ խօսքերը. ջանահնար լինինք որ գործովք ևս մեր անձանց վրայ ցուցընենք, ինչ որ բերանով կը քարոզենք Աստուծոյ հօտին. զի մէկ բարի օրինակը հազար խօսք կարժէ ունկնդիր հաւատացելոց. չլինինք շատաշրջիկ, և մեր կենցաղավարութեան շարժմանց, գնացից և խօսից մէջ ամենայն պարկեշտութիւն փայլեցնենք մեր վրայ. պէտք է որ հրաժարինք պչրանքէ և աղտեղութենէ. պարզ՝ սակայն և մաքուր հանդերձ բաւական է մեզ, զի ըստ աշխարհի մեռած ենք մենք. Պատուարժան դա՛սք քահանայից, գիտէք որ քահանայն բարեպաշտ ժողովրդեան առաջին քարոզիչն է, նորա ցաւոց մխիթարիչն, վշտաց ամոքիչն, ամեն պարագայի մէջ նորա ուրախակիցն և տրտմակիցն է, և ի մի բան՝ նորա անբաժան ընկերն է. մեծ և փափուկ է քահանայի պաշտօնը, և թէ ինչ երջանիկ է այն քահանայն, երբ իւր սուրբ կոչման արժանի կեանքով, վարքով, բարքով, խօսքով, և գործքով կը կատարէ քահանայական և տաներեցական պաշտօնը. անտարակոյս այնպիսին կրկին պատուոյ արժանի կը լինի ըստ Առաքելոյն, թէ՛ սիրուելով յաշխարհի աստ իւր ժողովրդէն, և թէ՛ վարձատրուելով յերկինս ի Ճշմարիտ Քահանայապետէն։

Քահանայք եղբա՛րք, ցոյց տալով ձեզ Ձեր երկնային գործոյն զօրութիւնն և մեծութիւնը, կը յորդորեմ զձեզ զամենքդ, որ ձեր քահանայական անուան և սուրբ կոչման համաձայն վարէք ձեր պաշտօնը. մաքուր հոգւով, սուրբ սրտով, հաւատով, յուսով և սիրով մատակարարէք Ս. Եկեղեցւոյ փրկարար Խորհուրդները. երկիւղածութեամբ կատարէք ըստ իւրաքանչիւր ժամու սահմանեալ աղօթքներն և ձեր այլ ամենայն հոգեւոր պաշտօնները, և ձեր մշտամռունչ և հոգեբուխ աղօթիւք փառաւորեցէք զԱստուած, և այնու ժողովրդոց ջերմեռանդութիւնը զարթուցանէք և արծարծէք. յորդորեցէք հայրերն ու մայրերը՝ որ ջանք և փոյթ տանին կրթելու իրենց թէ՛ մանչ և թէ՛ աղջիկ զաւակները, որոց համար պատասխանատու են առաջի Աստուծոյ և մարդկան. Դատարկ ժամանակ մի՛ անցնէք ընաւ, պարապեցէք միշտ ուսանելու Ս. Գիրքն և այլ օգտակար գիտելիքները. ձեր սրբութեան (ժամարարութեան) օրերուն մէջ հանապազ պարապեցէք ընթերցման և պատրաստեցէք ձեր սիրտն ու հոգին տուն և տեղի շնորհաց ճշմարտութեան Ս. Հոգւոյն։

Պատկառ կացէք Ազգային հոգեւորական վերին իշխանութեան, և նորա կողմանէ կարգեալ վեբաղձաս պաշտօնէից. այն է՝ առաջնորդաց և քարոզչաց կամ ատենակալաց. ձեզ աւանդուած պատուէրներն ու հրահանգները ճշդութեամբ ի գործ դրէք. ձեր քահանայավայել սրբակրօն ընթացքովը ձեզ յանձնուած ժողովրդոց բարի օրինակ հանդիսացէք, և առանձին քաղցրութեամբ միշտ հայրաբար խրատեցէք և ուսուցէք, թէ ինչ է բարին և ընդունելին առաջի Աստուծոյ, մխիթարեցէք մխիթարութեան կարօտ ժողովուրդը, զի Աստուած կը պատուիրէ մեզ իւր մարգարէին բերնովը, «Մխիթարեցէք, մխիթարեցէք զժողովուրդ իմ, ասէ Աստուած.» յորդորեցէք զժողովուրդն ի կատարեալ աստուածպաշտութիւն, յաղօթս, յեկեղեցասիրութիւն, յապաշխարութիւն ի Ս. Հաղորդութիւն Մարմնոյ և Արեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. յողորմածութիւն և այլ առաքինական գործս, և զգուշացուցէք զիրենք ծուլութենէ, մոլութենէ և այն ամէն անհաճոյ գործքերէ, որք կապականեն նոցա վարքն ու բարքը։

Եւ Սարկաւագաց և դպրաց կը պատուիրեմ որ ձեր վերադաս հոգևոր պաշտօնէից որոշուած հրահանգաց համաձայն կատարէք Եկեղեցւոյն մէջ ձեր պաշտօնն. անփոյթ և անտարբեր չգտնուիք ձեր պաշտաման վերաբերեալ պարտուց կատարման մէջ, որպէս զի ձեր անբասիր վարուք և հոգևոր փութաջանութեամբ արժանանաք մեծի շնորհացն Աստուծոյ։

Իսկ զձեզ, սիրելի ժողովուրդ Աստուծոյ, կը յորդորեմ սիրովն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, որ ձեր բովանդակ կենաց մէջ Ս. Գրոց աստուածաւանդ պատուէրները մտադիր լսէք և կատարէք ի փրկութիւն ձեր հոգւոյ. սրբութեամբ պաշտէք զկենդանին Աստուած յաւիտենից զնախախնամողն համայն տիեզերաց։ Ամբասիրն պահեցէք ձեր հայրենաւանդ սովորութիւնները, սիրեցէք Ս. Եկեղեցին՝ մեր Առաքելական Ս. Եկեղեցին. յաճախեցէք ի Ս. Եկեղեցի որ սրբութեան յարկ և փառաբանութեան տեղի է։

Սիրեցէք, ինչպէս արդէն ձեզ առմենեցուն սիրելի եղած է, խնամել աղքատներն, որբերն և անօթիները։ Ջանացէք սիրելի՛ք իմ ի Տէր, բոլոր կարևոր և բարեպաշտական հաստատութիւններն՝ Վանքերն, Եկեղեցիներն, Վարժարաններն, Հիւանդանոցներն, Որբանոցներն ևլն. չքեղ և փայլուն վիճակի մէջ պահելու, և մի՛ խնայէք ձեր նիւթական և բարոյական օժանդակութիւնն յօգուտ նոյն օրինակ հաստատութեանց, ի փառս Ազգիս և ի պարծանս առաջի օտարաց.

Գիտակ եմ արդէն, որ մեր ամէն դասակարգի ժողովուրդ չխնայէր իւր արդար վաստակէն բաժին հանելու այն ամէն Ընկերութեանց, որք գիտութեամբ և փափագմամբ Ազգային Պատրիարքարանի հաստատուած են փոքրիկ նպաստաւ՝ սատարելու պայծառութեան Եկեղեցեաց, բարեկարգութեան Վարժարանաց, խնամածութեան Աղքատաց, և այլ բարեգործական և մարդասիրական հաստատութեանց։ Սակայն պարտք կը համարիմ ինձ անգամ մ'ևս հրաւէր կարդալ և յորդորել որ խրախուսիչ ազգային անձաց ըստ չափու իւր կարողութեան ջանահար լինի նիւթապէս քաջալերելու ամէն բարեգործական ընկերութիւններն ու խնամակալութիւնները, որպէս զի ինչ կրական օգուտ և բարիք որ կըսպասուին և կրնան յառաջ գալ նոյն հաստատութեանց տուած աշխատութիւններէն և յառաջդիմութիւններէն, վայելենք ազգովին, և գոհ մնալով խրախուսենք զանոնք մեր նիւթական և բարոյական աջակցութեամբ։ Հաւատացէք, սիրելի ժողովուրդ Աստուծոյ, թէ ո՛վ որ կուտայ իւր ողորմութեան նուէրն յանուն Ս. Եկեղեցւոյ, յանուն վարժարանի, յանուն աղքատի և յանուն որբի և այրւոյ, կը դնէ իւր ողորմութեան լումայն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ ձեռաց մէջ, յորմէ և ոչ մի ինչ կը մոռցուի, մինչև իսկ յանուն Իւր շնորհուած բաժակ մը ցուրտ ջուրը։ Ի՜նչ մեծ զուարթութիւն և մխիթարութիւն սրտի է՝ բարեպաշտ հաւատացեալ մը, որ Եկեղեցւոյ մը կառուցման կամ նորա պայծառութեան համար եղած ծախուց ինքնայօժար սիրով կը մասնակցի։ Ի՜նչ երջանկութիւն է, որ Վարժարանի մը բացման և նորա միօրինակ յառաջխաղացութեան ի նպաստ խնդրուած դրամը չզլանար։ Ի՜նչ մեծ անդորրութիւն և ուրախութիւն է՝ որ շատ մը աղքատաց արտասուաց ջնջման, հեկեկանաց դադարման և տրտմաղղած սրտից սփոփանաց պատճառ կը լինին, տալով իրենց ողորմութեան մի քանի լումաները, մանաւանդ երբ իրենց նիւթական կարողութիւնէն կամաւոր բաժին մը կը յատկացնեն Եկեղեցւոյ, Ազգին և այնօրինակ սիրոյն։

Այո՛, հաւատացէք, կըսեմ, որ յանուն Եկեղեցւոյ, Վարժարանաց, աղքատաց և այլ բարեգործական հաստատութեանց ձեր շնորհած դրամական նպաստներովն և կամաւոր կը գանձէք յերկինս անկողոպտ և անեղծ գանձեր, որոյ պահապանն Յիսուս Քրիստոս մեր Տէրն է, որ իւր կենարար փրկագործութեամբն ուսոյց մեզ բարեգործութեամբք գանձել գանձս յերկինս, ուր ոչ գող մերձենայ և ոչ ցեցք ապականեն։

Մասնաւորելով խօսքս առ մարմնաւոր ծնողսդ և պաշտպանսդ որբոց՝ հայրաբար կը յորդորեմ որ մեծ հոգ տանիք ձեր որդւոց մտաւորական և բարոյական կրթութեան, և գիտցէք որ ձեր որդւոց կատարեալ կրթութիւնն ոչ միայն Եկեղեցւոյ և Ազգին մեծապէս օգտակար է, այլ և ձեզ ծնողացդ թանկագին գանձ մ'է. ուստի մի՛ խնայէք և ոչ մի ինչ Վարժարանաց համար, որպէս զի աւելի ևս բարեկարգուին և ձեր որդիք առաւելապէս օգտուին։ Գիտցէք նաև թէ ինչ և որքան կուսանին վարժարանաց մէջ, նոյնքան կուսանին ի ձէնջ աշխարհի մէջ ապրելու եղանակն. ուստի լաւ համոզուեցէք որ ձեր բարի խրատներէն աւելի ձեր օրինակը շատ ազդու է նոցա աչքին. ջանացէք ապա ընտանեկան առաքինութեամբ զարդանալու. փոխադարձ սէր, վստահութիւն, անկեղծութիւն և համեստութիւն ձեր կենակցութեան առանցքն թող լինին. երբ այսպէս կենակցիք, անշուշտ չեն ունենար այլ ևս ընտանեկան ցաւալի դէպքեր և ամուսնական կնճռալից խնդիրներ, որք նորամուտ են մեր մէջ, և պատուաբեր չէ բնաւ յառաջնոց ի վեր պարկեշտութեան և համեստութեան մասին գովելի հռչակուած Ազգի մը համար. և քանի՛ արտասուած արժանի այն անձն որ կանդխտանայ թէ Յիսուս Քրիստոս մեր Տէրը սրբագնացուց և բարձրացուց զամուսնութիւնն և դասեց ի կարգի փրկարար Խորհրդոց Ս. Եկեղեցւոյ. Բանզի գիտեմք որ ինչպէս Քրիստոս իւր հաստատած Ս. Եկեղեցւոյն հետ սերտ սիրով կապուած է և անտի անբաժանելի՝ ցխատարած աշխարհի, այսպէս այրն և կինը ցմահ անբաժանելի և ճշմարիտ սիրով կապուած պիտի մնան. ապա ուրեմն ո՛րքան նախահոգ զգուշութիւնք հարկաւոր են նախ քան զամուսնութիւն, և ո՛րչափ առաքինութիւնք պէտք են ի կենակցութեան, որպէս զի բարեպաշտութեամբ և առաքինութեամբ կենակցող ծնողքէ արդասաւորեալ ծնունդք ի տղայ տիոց լաւ հրահանգուին ընտանեկան յարկին մէջ և ըստ այնմ պատրաստուին մտնելու համար կրթական յարկը։

Բարեպաշտուհի Հայ կանայք են մեծ բաժին ունին իրենց որդւոց կրթութեան, որպէս և ամուսնական կենաց սրբութեան, տան տնտեսութեան և այլն մասին, և մեծ պատասխանատուութիւն. Ուստի կը յորդորեմ կանանց դասուն որ իրենց զգաստ, պարկեշտ և համեստ կեանքով, կենցաղավարութեամբ, համբերատար ոգւով և կատարեալ հաւատարմութեամբ սուրբ պահեն և թագրացընեն ամուսնական ապարէն սուրբ կեանքը. կը յորդորեմ որ Քրիստոնէական հաւատով, յուսով և սիրով և Քրիստոնէավայել առաքինութեամբ վառին ու փայլին փոխանակ պճնասիրութեան և չափազանց արդուզարդի հետևելով հալելու մաշելու. կը յորդորեմ որ իբրև կին ժրագլուխ իմաստութեամբ տնտեսեն և յանձանձեն տան բոլոր պիտոյքներն; և դէպ ի մեզ առաջնորդող մոլութիւններէ և պչրանքներէ հեռի փախչին իբրև խայթող և խածող օձէ։ Կը յորդորեմ և կը խրատեմ կանանց դասը սիրովն Յիսուսի Քրիստոսի, որ լաւ իմաստասիրեն իրենց արանց նիւթական և բարոյական վիճակը, և իրենց ամէն գործոյ, ընթացից և խօսից մէջ զայն միշտ ի նկատի ունենան և ըստ այնմ ամոքեն և մխիթարեն անոնց սիրտը, և թեթևցնեն անոնց օրական յոգնութիւնը։ Պայմաններ են ասոնք որք միայն կրնան ամուսնական յարկը խաղաղ, հանդիսա; երջանիկ և սուրբ պահել։ Կը յորդորեմ կանանց դասը՝ որ յարատևեն իրենց ծանօթ բարեպաշտ, եկեղեցասէր և բարեսէր կեանքն և զգացումները, սիրեն և Ս. Եկեղեցին Հայոց և իրենց սահմաններին մէջ աշխատին օգտակար լինելու Ազգին և Ազգային ամէն բարեպաշտական, կրթական և այլ բարենպատակ հաստատութեանց, և իրենց մայրական կոչման արժանի հանդիսանան։

Հայ երկսեռ մանկտւոյն կրթութեան գործոյն մէջ առաջին կրթիչն ու դաստիարակը դուք էք, մայրե՛ր. ձեր այս կոչումը տիեզերաց Արարչէն է. ձեր այս կոչումն և պաշտօն մեծ և սուրբ են. մեծ և ահարկու է և ձեր պատասխանատուութիւնը. ուստի կը յորդորեմ զձեզ որ արթնութեամբ և մանաւոր հոգատարութեամբ հսկէք ձեր որդւոց՝ մանչ ու աղջիկ զաւակաց կրթութեան և դաստիարակութեան վրայ, առաջին օրէն մինչև վերջին օրը, յորում կը յանձնէք զանոնք աշխարհի կենաց. Դուք էք, մայրե՛ր, որ կը սերմանէք մանկական սրտին, հոգւոյն և մտաց մէջ բարոյական ու մտաւորական կրթութեան սերմերը. դուք էք որ ձեր զաւակները յանտիական հասակէն կը կազմէք երկնից հետ, իւր ընտանեաց հետ, իւր Եկեղեցւոյն և Ազգին հետ, մարդկային ընկերութեան հետ. Ներշնչեցէք ապա մանկան Աստուածային իմաստութիւնը, բարոյական սրբութիւնը, ընտանեկան և ընկերական ազգային կենաց օգտակար պայմանները. Հսկեցէք որ երբեք աշխարհի վրայ ապրելու վեհ դիրքն ունենան և չմոռնին ու չիջնան այն բարձրութենէն ու չկործանին ի վնաս իրենց անձանց, իրենց ընտանեաց և իրենց Ազգին. Վերջապէս մայրե՛ր, հսկեցէք, ջանացէք, աշխատեցէք որ կատարեալ և բարձր նկարագրի տէր մանչ ու աղջիկ զաւակներ յանձնէք Ազգին ու աշխարհին. Այս պարտաւորութեան կատարմանէն յետոյ կրնաք ըսել թէ կատարեալ մայրեր եղած էք, և իրաւամբ կը վայելէք յաջողած ձեր որդւոց սէրն, յարգանքն ու խնամքը ձեր յալիս ծերութեան խանդաղած ժամանակին մէջ։

Ազգին զաւակաց կրթութեան կարևոր գործոյն վերաբերմամբ խօսելու ատեն կարելի չէ անտես ընել Ազգային յառաջադիմութեան անձնուէր պաշտօնեաները. ուսուցիչներն և դաստիարակները կըսեմ։ Դուք, ուսուցիչք և դաստիարակք, ամենքդ ունիք ձեզ մի կէտ նպատակի. այն է՝ Ձեր խնամոց յանձնուած աշակերտներն կրթել ուղիղ բարոյականաւ. բարի Քրիստոնեաներ և ճշմարիտ Հայեր և ընտիր քաղաքացիներ հասցնել, որպէս զի ունենայ Ազգն բարեպաշտ, առաքինի հայրեր ու մայրեր, և Ձեր ամենուն ներքին և անյեղլի համոզումն է որ մեր Ս. Եկեղեցին և Ազգն իրական կրթութեամբ կրնայ պահել իւր գոյութիւնը։

Զայս գիտնալով արդէն, պարտք կը համարիմ Ձեզ միայն յիշեցնել որ առանց Ձեր նպատակէն շեղելու ուշադիր լինիք դաստիարակելու Ձեր աշակերտներն երկիւղին Աստուծոյ, զի «Սկիզբն իմաստութեան՝ երկիւղ Տեառն է»։ Ուսուցէք Ձեր աշակերտաց Քրիստոնէական Ս. Կրօնքըն և նորա ուղիղ բարոյականը, զի մանկութեան ժամանակ անջնջելի յիշատակաւ տղայոց մտաց մէջ կը տպաւորուին աւանդուած կրօնական և բարոյական ամենակարևոր գիտելիքները։

Վարժեցուցէք Ձեր աշակերտները մայրենի լեզուի, պատմութեան, և այլ կարևոր և կենցաղօգուտ ուսմանց և գիտութեանց մէջ. Նաև Եթէ հնար ինչ է, ձեռագործի և արուեստից մէջ հրահանգեցէք զանոնք, որպէս զի կարող լինին դատարկութենէ և կարօտութենէ զերծ մնալ։

Երբ այսպէս Ձեր աշակերտները կատարեալ Աստուածապաշտ, առաքինասէր, հլու, և բարւոյն նախանձախնդիր հանդիսացնելու կարող կը լինիք, լաւ գիտցէք որ ծնողք երախտապարտ կը մնան Ձեզ տեսնելով որ իրենք տղայ կը յանձնեն Ձեզ, և դուք զանոնք մարդ ընելով և Հայ Ս. Եկեղեցւոյ — Հայ Ազգին և իրենց անձանց և մարդկութեան օգտակար նկարագրի տէր ընելով կը վերադարձնէք իրենց, և իրաւամբ արժանի կը լինիք անոնց երախտագիտութեան. Արժանի են ապաքէն առաւել երախտագիտութեան այն դաստիարակք և ուսուցիչք, որք իբրև մարմնաւոր ծնողք գուրգուրալով իրենց սանուց վրայ, բազում քրտամբք և ջանիւք կաշխատին տալու իրական կրթութիւն և նախանձելի կենցաղավարութեամբ նոյն բարի օրինակ հանդիսանալու։

Արդ՝ մեք եկեղեցական և աշխարհական Եպիսկոպոս, Առաջնորդ, Վանահայր, Վարդապետ, Քահանայ, Սարկաւագ, Ծնողք, Դաստիարակ, Ուսուցիչ, աշակերտ, այր, կին, երիտասարդ, կոյս, ծեր, տղայ ևայլն, ևայլն, ի բաց թողլով մտադրաբ ընդմիշտ ամէն բան ինչ որ վնաս կը պատճառէ մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյն և [illegible] Ազգիս, նոր վառքով, եռանդեամբ ու գործունէութեամբ ջանադիր լինիք կատարելու մեր առ Աստուած, առ Ս. Եկեղեցին, առ Ազգն և առ հոգևոր և մարմնաւոր որդիս մեր ունեցած սրբազան պարտաւորութիւնները. մեր բովանդակ կենաց մշտնջենական կանոն ընելով Սրբազան առաքելոյն սա իմաստալից և օգտակար խօսքերը։

«Սէր առանց կեղծաւորութեան, ատել զչար, զհետ երթալ բարւոյ, յեղբայրսիրութեան առ միմեանս գթածք. ի պատիւ զմիմեանս կանխել, ի փոյթ մի՛ վեհերոտք. հոգւով եռացեալք, Տեառն ծառայեցէք, յուսով խնդացէք, նեղութեան համբերեցէք, աղօթից սերտ կացէք, ի պէտս սրբոց հաղորդեցարուք, զհիւրասիրութեան զհետ երթայք» (Հռոմ. Գլ. ԺԲ. 9-13)։

Աղօթենք և խնդրենք սրտաբուխ հառաչանօք՝ որ բարձրեալ և ամենողորմածն Աստուած շնորհէ բովանդակ աշխարհի խաղաղութիւն և անդորրութիւն։ Աղօթենք ու խնդրենք որ աղբիւրն իմաստութեան և շնորհաց Սուրբ Հոգին շնորհէ մեզ հոգի գիտութեան, հոգի իմաստութեան, հոգի հանճարոյ, հոգի աստուածպաշտութեան, և առաջնորդէ զմեզ ի ճշմարիտն, ի բարին և յօգտակարն։ Աղօթենք և խնդրենք որ մարդասէրն Աստուած մեր Առաքելական Ս. Եկեղեցին և զմեզ պահէ յամենայն չարէ, ինչպէս ուսոյց մեր Փրկիչն Տէր Յիսուս Քրիստոս, թէ՝ «Այլ փրկեա զմեզ ի չարէ»։ Աղօթենք և խնդրենք որ Թագաւորն Թագաւորաց Աստուած յաւիտենական Թուրքիոյ լուսնածաւալ Պետութեան միահեծան և ինքնակալ Կայսրն Օգոստափառ Սուլթան Համիտ Խան պահէ Օսմանեան փառապանծ գահուն վրայ ընդ երկար՝ լի ամենայն բարութեամբ և երջանկութեամբ։

Հուսկ ապա կը յիշեցնեմ ձեզ առմենեցուն Առաքելոյն սա խօսքը, «Այսուհետև, եղբարք որ ինչ ճշմարտութեամբ է, որ ինչ պարկեշտութեամբ, որ ինչ արդարութեամբ, զայն խորհեցիք։ Զոր ուսայքն և ընկալայք և լուայք և տեսէք յիս, զայն արարէք, և Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ. Ամէն։ (Փիլիպեցւոց Գլ. Դ. 8-10)։

ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈՅ
ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Տուեալ ի Պատրիարքարանս Հայոց Կ. Պոլսոյ, ի 18 Յունուարի 1895 ամի և ի Տօմարական թուականին ՌՅԽԴ։

Փունջի հետ բաժանորդութենէ հաշիւ ունեցողներէ կը խնդրուի վճարել անյապաղ, և հրապարակաւ ազդարարութեանց հարկ չթողուլ։

— Գիւղացւոց ընտրած Մուխթարք ալ այսուհետև պետական ուրիշ պաշտօնէից պէս հաւատարմութեան երդումն պիտի ընեն ․

— Թրաֆալկար և Հօտ անուն անգլիական մարտանաւք Սէլանիկի նաւահանգիստն հասեր են, և յիշեալ նաւահանգիստն խարսխեալ անգլիական հինգ մարտանաւուց մին՝ Սան-Բարէյլ անուն՝ ի Մալթա ուղևորեր է ․

— Զինուորական դպրոցի աշակերտներէն խումբ մը անցեալ շաբաթ օր Մախսուսէի շոգենաւով Սէլանիկ ուղևորեցան՝ իրենց ծնողաց այցելելու համար ։ Ուրիշներ ալ այս նպատակաւ ուրիշ կողմեր պիտի ուղևորին ։ Սոյն ճանբորդաց անցագիրք շոգենաւուն մէջ տրուեցան ․

— Ի պաշտօնէ կը հրատարակուի թէ՝ Թոգատի թղթատարութեան զարնուելու դէպքին պատճառաւ բանտարկեալ 50 մարդիկ արձակեցան կայսերական հրամանաւ, ի բաց առեալ թղթատարութեան վրայ յարձակող և սուրհանդակն սպանողներն, որք ըստ օրինի պիտի պատժուին ։

— Կ. Պոլիս Եէնիգափու Գարա-Պօյաճըլար թաղի մէջ Ֆիլիք անուն յոյն նպարավաճառին խանութէն երկուշաբթի գիշեր հրդեհ պատահելով՝ 13 տուն ու 5 խանութ այրեցան ․ Ամեն․ Ս․ Պատրիարք Հայրն և Գեր․ Տ․ Հմայեակ Սրբազան ալ նոյն գիշերն այլոց հետ աշխատեցան՝ հրդեհին ճարակումն արգիլելու համար ․ Ֆիլիք կը հարցաքննուի՝ խանութն ապահովագրեալ լինելուն համար կասկած լինելով թէ դիտմամբ հրդեհած է ․ Յիշեալ թաղն անձուկ է, ու շէնքերն՝ փայտեայ ․

— Էնկիւրիի Զամըր գիւղի մէջ, երեք ամիս առաջ 60 տարեկան անձի մը հետ ամուսնացեալ 20 տարեկան գեղեցիկ աղջիկ մը՝ անցեալ շաբթու մէջ ամուսնոյն կուրծքը դանակ մը մխեր է՝ քնացած ատենն, որպէս զի ազատի նորա կենակցութենէն ․ Այս աղջիկը բռնուեր և իւր ոճիրն խոստովաներ է ․

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

= Ի Սարտենիա՝ 82 տարեկան երկրագործ մը ամուսնացաւ 80 տարեկան կնոջ մը հետ ․

= Զինաստան՝ Գերմանիայէ 400 հազար լիրայի զէնք ու ռազմանիւթ գներ է ․

= Անգլիոյ մէջ ալ այս տարի սաստիկ է ձմեռն ․ Քանի մը մարդիկ ցրտէն մեռեր են ․

= Հռոմայ Պապն թէպէտ այցելուներ կընդունի, բայց վատառողջ է ․

= Սիրակուսայի նահանգին մէջ ուժգին փոթորիկ մը՝ մեծ վնասուց և բազում մարդոց վիրաւորման պատճառ եղեր է ․

= Զինաստան վերջապէս յատուկ պատուիրակութեան միջոցաւ Եւրոպիոյ միջնորդութիւնը կը խնդրէ՝ Ճաբոնի հետ հաշտութեան համար ․

= Ի մօտոյ միջազգային ժողով մը պիտի գումարի, միջազգային թղթատարութեան յատուկ միօրինակ դրոշմաթուղթ մը հաստատելու համար ըստ առաջարկութեան Գերմանիոյ ․

= Ռուսիոյ կառավարութիւնն պիտի գնէ այսուհետև երկրին ցորեանն ու հաճարն երկրագործներէն ու վաճառականներէն, և պիտի տայ զօրաց ու ժողովրդեան ․

= Միացեալ Նահանգաց կառավարութիւնն՝ 68 միլիոն տոլարի գանձային թուղթ պիտի հանէ ի շրջաբերութիւն ․

= Զվիցերիի Պէրն նահանգի մէջ, ժողովրդեան քուէով (24543 քուէի դէմ 26238 ով) մերժուեր է պատուաստի պարտաւորիչ լինելն, մինչդեռ Եւրոպիոյ բազում կողմերն և Զվիցերիի մէջ 40-45 տարիներէ ի վեր պարտաւորիչ եղած է օրինօք ․

= Ամերիկայի մէջ ալ սաստիկ է ձմեռն այս տարի․ Ֆինլանտիոյ նահանգի բովանդակ մշակութիւնք ոչնչացեր, և մարդիկ մեռեր են ցրտէ ․

= Դարատաղի իշխանին մայրն՝ Սթանա իշխանուհին, որ պառաւութեան պատճառաւ անդամալուծեալ էր և ի Վենետիկ կը բնակէր, մեռեր է ․ Համբաւեալ էր իբրև բարեպաշտ և գթած ․

= Երուսաղիմայ ռուսք Զարին նուիրեր են՝ հարիւրամեայ մայրի ծառի մը կտորին վրայ քանդակեալ պատկեր մը Երրորդութեան ․

= Սիկիլիոյ կղզւոյն և Գալապրիա նահանգին մէջ՝ քանիցս ուժգին գետնաշարժներ պատահեր են ․

= Ի Նիւ Եորք՝ 522 եկեղեցի կայ, որք կրնան 400000 հոգի պարունակել․

= Միացեալ Նահանգաց մէջ՝ կարդալ գրել չգիտցող մարդոց թիւն 6 միլիոնէն աւելի է ․

= Գաղղիոյ 200 քաղաքաց մէջ կը կանգնեն՝ վախճանեալ նախագահ Գարնոյի արձանն ․

= Ի Լոնտոն՝ 803 նամակատուն կայ ․

= Անգլիոյ Թագուհին քաջածանօթ է 11 եւրոպական լեզուաց ․

= Ճաբոնի բժշկաց թիւն է 39600 ․

= Ռուսիոյ կայսերաց յատուկ թագն՝ 1 միլիոն 200 հազար լիրայ կարժէ ․

= Գերմանիոյ և Աւստրիոյ մէջ՝ խոհարարութիւն ուսուցանող 150 վարժարանք հաստատեալ են, քառամեայ ընթացքով․

= Միացեալ Նահանգաց մէջ 4 միլիոն մարդիկ կապրին՝ երկաթուղեաց մէջ զանազան պաշտօններով ․

= Միացեալ Նահանգաց մէջ՝ ամուսնացեալ կանայք ամուսնացեալ այրերէն աւելի են ․

= Միացեալ Նահանգաց արևմտեան նահանգաց ոմանց մէջ ժողովուրդն ուտելիքի համար մեծ նեղութիւն կը կրէ, և ի Նէպրասգա սովէ մեռնողներ կը գտնուին ․

= Անգլիոյ մէջ դատարանաց ոմանք պատիժ վճռեցին ա՛յն մարդոց համար, որ իրենց շանց ականջներն կտրած էին՝ զանոնք աւելի վայելուչ ընելու համար ։ Վճռատուք իբր աւելորդ անգթութիւն համարեր են զայս, և անասնոց պաշտպան ընկերութիւնըն շատ գոհ եղեր է այս վճռէն ․

* * *

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

xxx Բարեկրթութիւն ․ Մարդկային ընկերական կենաց մէջ ապրող անհատի՝ անհրաժեշտ պայման է բարեկրթութիւնը ․ Մարդ՝ բառին բուն նշանակութեամբ, կատարեալ քաղաքավար ըլլալու համար, պարտի իւր իմացական կարողութեան հետ միացունել բարոյականը, և վայելչութեան, պարկեշտութեան, ի մի բան՝ գործնական բարոյագիտութեան տեղեակ ըլլալու է ․ Բարեկրթութիւնը արտայայտումն է բարեսրտութեան, բարոյագիտութեան և վեհանձնութեան . բայց ո՛չ արտաքուստ ցոյց տրուած կեղծ ձևականութիւնք՝ զորս կընեն շատեր անոտի ունայնամտութեամբ, իրենց եսութիւնն ու փառասիրութիւնը գգուելու համար ․ Պարտ է գիտնալ թէ առանց ազնուութեան, առանց բարեսրտութեան չկայ երբէք կատարեալ բարեկրթութիւն ․ Հակաքաղաքավարական գաղափարներով տոգորուած կեղծ մարդասէրներ, անիրաւաբար և անամօթաբար ձայն կը բարձրացնեն ընկերութեան մէջ, և կը բացագանչեն ըսելով թէ՝ բարեկրթութիւնը լոկ դիմակ մ'է ։ Մինչդեռ ընդհակառակն է . եթէ ճշմարիտ բարեկրթութիւնը դիմակ մը ըլլար, կեղծ քաղաքավարութեամբ դիմակաւորեալք՝ փոխանակ հասարակութեան նախատանաց՝ անոր սիրոյն և համակրանքին արժանի լինելու բարեբաղդութիւնն պիտի վայելէին ․ Ըստ առածին, ճշմարտութեան լեզուն քաջայանդուգն է միշտ ․ Պիտի գայ ժամանակ որ կեղծաւորութեան անպատուաբեր դիմակը պիտի բրդզի և ստութեան վարագուրին ներքև պարփակեալ հոգին ի յայտ պիտի գայ իւր բոլոր սևութեամբ ․ Ամէն անոնց՝ որ գռեհիկ են, բնականաբար դժուար կուգայ համակերպիլ քաղաքավարութեան, և անշուշտ այդպիսեաց համար կը պակսին անկեղծ բարեկամներ ․ Տղայ մը՝ իւր մանկական հասակէն դէպ ի վեհ և ազնիւ գաղափարներ ձգտում մը ունենալու է . այսինքն միշտ աշխատելու է բարեկամական սերտ կապակցութիւն հաստատել ամէն անոնց հետ՝ որք ազնուութեան և բարեկրթութեան գեղեցիկ համբաւ մը շինած են իրենց անուան շուրջը ․ զի այդպիսիք են՝ որ գիտեն բարձր պահել իրենց նմանեաց պատիւը ․ վասնզի, մարդ որքան բարձր ընկերութեան մէջ ապրի, ա՛յնքան կազնուանայ սիրտն ու հոգին և միանգամայն կը կրկնապատկի իւր արժէքն . ուստի շատ իրաւամբ ըսած է իմաստունը թէ՝ ըսէ ինձ բարեկա՛մ թէ ո՛րու հետ կը տեսնուիս, և ես ըսեմ քեզ թէ ի՛նչ կարժես ․ Արդարև, կան շատեր որք ուրիշին միայն հաճելի լինելու համար, կոյր փառասիրութենէ հրապուրեալ՝ կեղծ քաղաքավարութեան բուրվառով իրենց խօսակցին եսութիւնը կըխնկարկեն . ահա՛ այդպիսիք են՝ որք աւելի արհամարհանաց արժանի են՝ քանթէ անոնք, որ անդէտ են բարեկրթութեան պահանջմանց ․ Ճշմարիտ բարեկիրթ են այն անձինք՝ որ ներքին անկեղծ համոզմամբ գիտեն և կը ճանչնան անկեղծ քաղաքավարութեան վեհ և վսեմ արժանիքն, և այդ նպատակաւ կազմակերպած են իրենց միտքը, սիրտն ու հոգին ․ Այդպիսիք կանուխէն միշտ իրենց ընկերին թերութիւններն և քաղցրահայեաց աչօք կը նային անոնց տկարութեանց վրայ . կը լինին խոհեմ, զգուշաւոր, խոհական և նամանաւանդ ներող . և արդէն աշխարհի մէջ կա՞յ անձ մը, որ պէտք չունենայ ներողամտութեան Այո՛, ինչպէս ամեն բանի կեղծը միշտ նողկանք կազդէ մարդուս, նոյնպէս կեղծ քաղաքավարութիւնը . բայց ճշմարիտ բարեկրթութիւնը ո՛չ թէ ձանձրոյթ այլ հաճոյք կը պատճառէ ամենուն ։ Բարեկրթութիւնը չբռնադատեր զմարդ, այլ թողած է նորա ազատ կամաց . ուրեմն ամէն ոք կարող է հետևիլ նմա՝ երբ ուզէ, միայն թէ ունենայ այդ բարի կամեցողութիւնը ․ Մարդասիրութիւնն՝ որոյ օրինակը տուած է մեզ Երկինք, պարտք կը դնէ ամենուս վրայ և կըստիպէ զմեզ լինել անկեղծ քաղաքավար ու մարդասէր՝ նոյն իսկ ամենէն աւելի անոպայ և գռեհիկ մարդոց հետ, որովհետև այս իսկ է ճշմարիտ միջոց, որով կրնանք զանոնք ամօթահար ընել և երբեմն ալ յուղղութիւն հրաւիրել․ Բարի անուան արժանի լինելու համար, ամէն ուրեք և ամէն պարագայի մէջ պէտք է ըստ պահանջման բարեկրթութեան ընթանալ․ Անոնք՝ որ զուրկ են դաստիարակութենէ ու բարեսրտութենէ, անմասն են հասարակութեան սէրէն, որովհետև կեղծ քաղաքավարութեան հրապուրիչ և սիրուն դիմակին տակ կը ծածկեն իրենց մոլութիւններն, և այնպէս կը կարծեն թէ՝ բարեկրթութիւնն ալ այդպէս կը պահանջէ, Ո՛չ երբէք ․ Մ․ Ա․

ՆՈՐԱՎԷՊ․ - Աղջկան մը յիշատակարանը ․ - Գրեց Տօքթօր Կ․ Յ․ Փաշաեան ․ - Տպագրութիւն Նշան Կ․ Պէրպէրեան ․ - Գինն է 5 ղրուշ ․

ՎԱՇԽԱՌՈՒԻՆ ԱՂՋԻԿԸ
ՍԻՐԱՎԷՊ
ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ ՔԱՂՈՒԱԾ
Գրեց Մկրտիչ Թիւթիւնճեան

Մեծադիր և 139 էջերէ բաղկացեալ սոյն հետաքրքրաշարժ վիպասանութիւնն, որ վաշխառութեան արարքները կը պատկերացնէ, արժանի է ամէն դասու ազգայնոց ընթերցման ։ - Գինն է 5 ղրշ և կը վաճառուի ամէն Հայ գրավաճառաց քով ․

ՄԻՒՔԷՄՄԷԼ
ՍԱԼՆԱՄԷ
1895

Հայ տառերով ու թուրք լեզուաւ գրուած է ․ Բաւական կարևոր տեղեկութիւններ կը պարունակէ, ինչպէս նաև Կ. Պոլսոյ բոլոր պանդոկներուն ու կառավարական պաշտօնատանց տեղերն, ևն․ Գինն է 2 ղրշ ․ Կեդրոնատեղին է Մ․ Փափազեան գրատուն, Սիւմպիւլլիւ խանի մէջ թիւ 21 ։

Միջին ընթացք Թուաբանութեան, մասն օր և գրաւոր ․ Գ և Դ տարի ․ Գինն է 5 ղրշ ․

Առաջնորդ փրկութեան ․ Գրեց Տ․ Գաբրիէլ Քահանայ Տ․ Յարութիւնեան Կիւրլեցի ․ Գինն է 5 ղրշ ․

ԳՐԱՏՈՒՆ
ՄԻՀՐԱՆ Յ. ՓԱՓԱԶԵԱՆ
(Կեդրոն Գաւազաշեան գրոց)
Կ. ՊՈԼԻՍ
Զագմաճըլար, Զիւմպիւլլիւ խան,
Թիւ 21

Սոյն գրատան մէջ կը վաճառուին ամէն տեսակ դպրոցական դասագրքեր Հայերէն, Տաճկերէն եւ Գաղղիարէն, զեղչեալ գներով եւ ամենագոհացուցիչ պայմաններով ։ Գրատունըս իւրն կէտ նպատակի ընտրած է ամէն ժամանակ ճշդապահութիւնն, աժանութիւնն եւ արագութիւնն ։ Ուստի ամէն անոնք որ կը փափաքին առանց խաբուելու եւ զեղչեալ գիներով գիրք գնել, պէտք է ուղղակի դիմեն առ մեզ ։ Գրատանս մէջ կը շինուին եւ կը վաճառուին նաեւ ամէն տեսակ վաճառականական եւ գեղագործի յատուկ տետրակներ հաստատուն եւ ընտիր կազմով, մեծաքանակ եւ թէ՛ փոքրաքանակ, խիստ դիւրամատչելի գներով ։

PILULES HOLLOWAY
ԴԵՂԱՀԱՏՔ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի և աղիքներու ամէն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, և ամէն ջղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար ․ կը ջնջէ և անհետ կընէ ամէն տեսակ անչափաւորութեանց հետքերը ։ Սրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մը ունի ․ արիւնը մաքրելով՝ նորա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ ․ Իւր դեղական մեծ ազդեցութեամբ սրտախառնութիւն, կծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ ցուած կազեր, գլխի ցաւեր կվանէ, մարսողութիւնը կչափաւորէ, և մարմինը մաքրելով բոլոր այն աղտեղութիւններէ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ՝ ուժեղ և բնական դիրքը կըվերագտնու ։

ONCUENT HOLLOWAY
ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւն և վէրք բուժելու մասին ունեցած պալսամական յատկութեանը չհաւասարիր ընաւ ուրիշ դեղ մը․ Հին կամ նոր թունաւոր վէրքեր, ուռեցք, քաղցկեղ (չիրիփենչէ), սրունից և ստեանց վէրքեր կա՛մ բոլորովին կանցնին և կա՛մ կլաւանան․ Օգտակար է նաև հարբուխի, հազի, սրտի բաբախման, մանաւանդ յօդացաւ (եէլ) ըսուած հիւանդութեան ։ Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սըրաճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմադրաւէ ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամէն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պաղչէ-գաբու Թաշ-խանի կողմերը Պ․ Գասպարեանի դեղարանը, Թիւ 7, կը ծախուի ․

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն տօքթօր Հոլլոու, ի Լոնտոն Օքսֆորտ փողոց Թիւ 533 ․

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
Հ․ Թ․ ԱՂԱՃԱՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԱՊԵՏ ՊԻՊԵՐԵԱՆ
Կ․ Պոլիս Զիւմպիւլիւ-խան Թ․ 18-19